ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

_____№ _____
Ձեր N _____

«ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ին

(հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Դավթաշեն 2-րդ թ., 2-րդ շ, 55տ,

էլ. Փոստ՝ infoteliamed@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀՇՀԽ-2025-35 ծածկագրով պայմանագիրը

միակողմանի լուծելու մասին

ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և **«ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ** -ի միջև 15.08.2025 թվականին կնքված **«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀՇՀԽ-2025-35»** ծածկագրով ***ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար ապրանքի*** գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը» պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ղեկավարվելով վերոհիշյալ իրավական հիմքերով և «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ -ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորություններից հրաժարվելու 25.08.2025թ. թիվ 40215-

2025 գրությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը լուծում է «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրը: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի ա) պարբերությունը, «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ -ին տրվում է 10 օրացուցային օր պայմանագրի ապահովման՝ 350 000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման՝ 525 000 ՀՀ դրամը (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.1 և հավելված 3.2) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված N 900008000664 գանձապետական հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու և բնօրինակները ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնելու համար, որի դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի կողմից պատճառաբանված որոշումը չի կայացվի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Recoverable Signature

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝
ՀՀ ԱՆ ԳՀԾՀԽ գնումների մասնագետ
Լիլիա Չախոյան
Հեռ 060 80-80-03 (2703)